ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 158 - Ա 24 մայիսի 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ՎԱՂԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԱԱՊԿ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածների պահանջներով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ներքին աուդիտի 2017թ տարեկան ծրագրին համապատասխան «Վաղաշեն գյուղի ԱԱՊԿ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ներքին աուդիտ անցկացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Ղուլոյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի վարիչ, աշխատանքային խմբի ղեկավար

Հայկազյան Ա - մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ

Անհրաժեշտության դեպքում աշխատանքային խմբի մեջ ներգրավել համապատասխան մասնագետներ և փորձագետներ:

2. Աշխատանքային խմբին՝ իրականացված աուդիտի արդյունքները սահմանված ժամկետում ներկայացնել ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ